ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի ապրիլի 27-ից 29-ը

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

1) Նաիրուհի Ավետիսյան,

2) Անդրանիկ Հակոբյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

1) ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Տրանսֆերային գնագոյացման և հարկային համագործակցության բաժնի պետ,

2) ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Տրանսֆերային գնագոյացման և հարկային համագործակցության բաժնի գլխավոր հարկային տեսուչ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, ապրիլի 27-ից 29-ը

4. Հրավիրող կողմը՝

Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Ռուսաստանի դաշնային հարկային ծառայության կողմից կիրառվող տրանսֆերային գնագոյացման կարգավորումներին, տրանսֆերային գնագոյացման հարկային վարչարարության իրականացման ընթացակարգերին ծանոթանալու, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայության միջև երկկողմ համագործակցության ամրապնդման հարցերի քննարկման նպատակով:

6. Քննարկված թեմաները՝

Հանդիպման ընթացքում Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայության ներկայացուցիչները ներկայացրել են ՌԴ տրանսֆերային գնագոյացման կարգավորումները, գործնական օրինակներ, տրանսֆերային գնագոյացման ռիսկերի գնահատման և վերհանման մեխանիզմները, վիճակագրություն տրանսֆերային գնագոյացման ստուգումների և արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև ՌԴ դաշնային հարկային ծառայության

տրանսֆերային գնագոյացման աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Կայացել է հանդիպում Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայության Միջազգային համագործակցության և արժութային հսկողության վարչության պետ պրն. Ելիսեյ Բալտայի, Հարկման նպատակով գնագոյացման մասով դաշնային հարկային ծառայության միջտարածաշրջանային տեսչության ղեկավար պրն. Անդրեյ Գորոդնիչևի, Տրանսֆերային գնագոյացման վարչության պետ տիկին Ալեքսանդրա Կադետի, ինչպես նաև նշյալ տեսչության և վարչությունների մի շարք աշխատակիցների հետ: Քննարկվել են ՌԴ տրանսֆերային գնագոյացման փորձն առհասարակ, կիրառման 10 տարիների ընթացքում կուտակված փորձը, ի հայտ եկած խնդիրները և լուծման ուղիները: Այցի նպատակներից էր նաև տրանսֆերային գնագոյացման ռիսկերի համակարգի ուսումնասիրությունը, ռիսկերի վերհանման մեխանիզմները, վերլուծություն իրականացնելու գործիքակազմը: Քննարկվել են նաև նախնական գնագոյացման պայմանավորվածության վերաբերյալ կարգավորումներին վերաբերող հարցեր, ինչպես նաև տրանսֆերային գնագոյացման ՌԴ ստուգված կազմակերպություններից գործնական օրինակներ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են հարկային վարչարարության իրականացման նպատակով տեղեկությունների փոխանակմանը վերաբերող հարցեր, որից հետո մտքեր են փոխանակվել համագործակցության հետագա ուղղությունների ամրապնդման վերաբերյալ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման արդյունքում կողմերը պայմանավորվել են համագործակցության առավել ընդգրկուն հարթակ ստեղծելու նպատակով առաջիկայում նախատեսել հաջորդ այցը, որի օրակարգն արդեն իսկ գտնվում է մշակման փուլում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայության ներկայացուցիչները շեշտել են երկու գերատեսչությունների միջև սերտ համագործակցության կարևորությունը, նման հանդիպումները հաճախակի կազմակերպելու

անհրաժեշտությունը: Ակնկալվում է, որ առաջիկայում տեղի կունենա ընդլայնված կազմով հանդիպում, որի շրջանակներում կքննարկվեն լայն շրջանակի հարցեր:

Նշենք նաև, որ ս.թ. մայիսի 3-ին ՊԵԿ համապատասխան աշխատակիցների համար ներկայացվել է շնորհանդես՝ գործուղման ընթացքում ձեռքբերված տեղեկությունները վերջիններիս հասանելի դարձնելու նպատակով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

[signature], [illegible] Ավետիսյան, 03.05.2022թ.

[signature], Անդրանիկ Հակոբյան, 03.05.2022թ.